

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային  
շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of Red Cross and  
Red Crescent Movement

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

IMPARTIALITY

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ

NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

UNITY

ՀԱՄԸՆԴՐԱՆՐՈՒԹՅՈՒՆ

UNIVERSALITY



Ամեն օր աշխարհում ծագող կամ խորացող ճգնաժամերը շարունակում են նոր մարտահրավերներ ստեղծել մարդասիրական կազմակերպությունների համար, որոնց առաքելությունն է լինել ամենախոցելիների կողքին:

Մեր երկիրն ու տարածաշրջանն էլ անմասն չեն աշխարհի գլոբալ ճգնաժամերից, որոնցից են լայնածավալ միգրացիան ու ծերացող բնակչության թվի աճը, իսկ կլիմայի փոփոխության հետևանքով հաճախակի դարձած բնական աղետները մշտապես սպառնում են անապահով խավերի համար սոցիալական աղետի վերածել:

Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով մեր նախանշած առաջնահերթությունները՝ շարունակել ենք գործունեությունը բոլոր ռազմավարական ուղղություններով: Անցյալ տարի ևս ջանք չենք խնայել բոլոր շահագրգիռ կողմերի մարդասիրական ներուժը մոբիլիզացնելու և խոցելի խմբերի կարիքներին հնարավորինս բազմակողմանի արձագանք ապահովելու ուղղությամբ:

2018 թվականի մեր ձեռքբերումներից ենք համարում չորս սահմանամերձ մարզերում և Երևանում պատրաստված և տեխնիկապես հագեցված Աղետներին արձագանքման թիմերի ստեղծումը, Առաջին օգնության հանրայնացումը, սիրիահայերի և երիտասարդների խնդիրների լուծմանն ուղղված երկու խոշոր ծրագրերի մեկնարկը, նոր համագործակցությունների հաստատումը, ինչպիսիք էին համատեղ մարդասիրական ծրագրերը՝ ԶԶ Պաշտպանության նախարարության և Հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի հետ: Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետներին արձագանքման արտակարգ

Every day the crisis, that are emerging or deepening in the world, continue to create new challenges for humanitarian organizations, whose mission is to be with the most vulnerable.

Our country and our region are not isolated from the global crises of the world, including widespread migration and an aging population, and natural disasters, often caused by climate change, are constantly threatening to grow into a social disaster for vulnerable groups.

Keeping our priorities in mind, we have continued to work in all strategic directions. Last year, we also didn't spare any effort to mobilize the potential of humanity of all the stakeholders and provide the most comprehensive response to the needs of vulnerable groups.

Among our achievements in 2018 are the creation and technically equipping of the Disaster Response Teams in four border regions and Yerevan, the large dissemination of First Aid, the launch of two major programmes addressing Syrian-Armenians and Youth needs, the establishment of new partnerships, such as the joint humanitarian projects with the Ministry of Defense and with the Russian - Armenian Humanitarian Center.

Thanks to the cooperation with the Disaster Response Emergency Fund of the International Federation of Red Cross and Red Crescent Societies, we were able to respond to the consequences of severe hailstorms in Shirak region, providing humanitarian assistance to the most affected families.

In 2018, we marked the 30th anniversary of the Spitak earthquake. As a result of response and coordination of large-scale humanitarian assistance after the disaster, the most active phase of the

իրավիճակների ֆոնդի հետ համագործակցության շնորհիվ կարողացանք արձագանքել Շիրակի մարզում օգոստոսին տեղացած ուժեղ կարկուտի հետևանքներին՝ մարդասիրական օգնություն տրամադրելով առավել տուժած ընտանիքներին:

2018 թվականին լրացավ Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցը, մի աղետ, որին արձագանքի և լայնածավալ մարդասիրական աջակցության տրամադրման համակարգման արդյունքում սկսվեց Հայկական Կարմիր խաչի ընկերության գործունեության առավել ակտիվ փուլը: Այդ կապակցությամբ «Մարդասիրության հզոր ուժը» խորագրով կազմակերպված հիշատակի երեկոն մի առիթ դարձավ, որը կոչված էր ևս մեկ անգամ նշելու Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային Շարժման միասնական ուժը և երախտագիտություն հայտնելու այն բոլոր 46 Ազգային ընկերություններին, որոնք 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո կանգնեցին հայ ժողովրդի կողքին՝ անտարբեր չմնալով աղետի ավերիչ հետևանքներից տուժածների տառապանքների հանդեպ: Նրանցից շատերը մեր մշտական գործընկերները դարձան՝ աջակցելով Ազգային ընկերության զարգացմանն ու գործունեության ընդլայնմանը:

Մարզային մասնաճյուղերի զարգացումը շարունակում է մեր առաջնահերթությունների շարքում մնալ, և ուրախությամբ փաստում ենք, որ նրանք հաստատուն քայլերով առաջ են գնում՝ հանդես գալով սեփական նախաձեռնություններով, ներգրավելով նոր կամավորների և շահառուների խմբերի: Պետական մարմինների և միջազգային գործընկերների աջակցության շնորհիվ էապես բարելավել ենք և մարզային մասնաճյուղերի, և կենտրոնական գրասենյակի աշխատանքային հնարավորությունները:

Եվս մեկ տարի և մենք կնշենք մեր գործունեության 100-ամյակը, մի հոբելյան, որը մեզ պարտավորեցնում է, հետադարձ հայացք նետելով և գնահատելով անցած ուղին, համընթաց քայլել զարգացումներին՝ հանդես գալ մարդասիրական խնդիրներին արձագանքելու նորարար լուծումներով:

Շնորհակալություն ենք հայտնում մեր կամավորներին, նվիրատուներին ու գործընկերներին՝ մեր մարդասիրական առաքելության իրագործմանն իրենց անգնահատելի նպաստն ունենալու համար:

Մենք օգնում ենք Ձեր օգնությամբ:

activities of the Armenian Red Cross Society started.

On this occasion, we organized a commemoration event, entitled “The Power of Humanity,” to mark once again the united power of the Red Cross and Red Crescent International Movement and to express gratitude to all the 46 National Societies, for not being indifferent to the sufferings of the affected population by the devastating disaster and standing by the Armenian people following the 1988 Spitak earthquake. Many of them have become our permanent partners, supporting the further development and increase of activities of the National Society.

The development of the regional branches continued to be one of our priorities, and we are pleased to announce that they are making steady steps forward with their own initiatives, involving new volunteers and stakeholder groups. Thanks to the support of government agencies and international partners, we have significantly improved the working capacities of both the regional and the central offices.

Another year, and we will celebrate the 100th anniversary of our work, a jubilee that commits us to reflecting on and evaluating the past, to keep pace with the recent developments, coming up with innovative solutions to respond to humanitarian problems. We thank our volunteers, donors, and partners for their invaluable contribution to the fulfillment of our humanitarian mission.

We help with Your help.

**Նախագահ  
Մխիթար Մնացականյան**  
**President  
Mkhitar Mnatsakanyan**



**Գլխավոր քարտուղար  
Աննա Եղիազարյան**  
**Secretary General  
Anna Yeghiazaryan**



## Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ իր 2011-2020 թթ. ռազմավարության, առաջնորդվում է հետևյալ արժեքներով:

### Մարդիկ

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենաամհիրաժեշտ և խոցելի կարիքները հոգալու համար:

### Ազնվություն

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

### Համագործակցություն

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

### Բազմազանություն

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

### Առաջնորդություն

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

### Նորարարություն

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

Մենք աշխատում ենք հետևյալ ռազմավարական ուղղություններով.

- Աղետների կառավարում
- Բնակչության տեղաշարժ
- Որոնում ծառայություն
- Առաջին օգնություն
- Սոցիալ-առողջապահություն
- Մարդասիրական արժեքների տարածում
- Միջազգային համագործակցություն
- Երիտասարդական, կամավորություն և անդամակցություն
- Կազմակերպության զարգացում
- Ռեսուրսների մոբիլիզացում



ՀԿԽԸ Աղետներին արձագանքման թիմերի վարժանք՝ ուժեղ երկրաշարժի սցենարով, Ստեփանավան, Լոռի, 09.2018

**2018 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է գործողությունները՝ բնական ու տեխնածին աղետների նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացման ուղղությամբ՝ հզորացնելով նաև կազմակերպության կարողությունները աղետներին նախապատրաստման և արձագանքման ոլորտում:**

**2018թ. աշխատել ենք 14 գյուղական և 7 քաղաքային համայնքներում՝ Շիրակում, Լոռիում, Սյունիքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում, Տավուշում և Երևանում:**

«Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի երկրորդ փուլը մեկնարկել է 2015թ. դեկտեմբերին և շարունակվելու է մինչև 2019թ. փետրվար: 2018 թ. ընթացքում Ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ

իրավիճակների (ԱԻՆ), Կրթության և գիտության նախարարությունների, մարզային և տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ հնարավոր դարձավ գրանցել հետևյալ հիմնական ձեռքբերումները.

Ամրապնդվեց թիրախային 8 համայնքների՝ Կողես, Սարչապետ, Վահագնի, Դարպաս, Մարգահովիտ, Մեծ Պարնի, Օծուն, Կուրթան, պատրաստվածության մակարդակը: Համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) համար կազմակերպված ԱՌԿ, Առաջին օգնության, որոնողափրկարարություն թեմաներով թարմացման դասընթացների միջոցով: ՀԿԹ-ների համար կազմակերպվեցին նաև ուսումնավարժանքներ, որտեղ թիմի անդամները գործնականում ամրապնդեցին աղետներին դիմակայելու և արձագանքման իրենց

գիտելիքները: Վարժանքներին մասնակցում էին թիրախային համայնքների տեղական իշխանությունները և Լոռու Մարզային փրկարար ծառայության ներկայացուցիչները:

Բարձրացվեց Լոռու մարզի բնակչության իրազեկվածության մակարդակը: Աղետի

և արձագանքի կազմակերպման սցենարների էլեկտրոնային համակարգ: Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի արձագանքման կարողությունների բարձրացման նպատակով ձեռք է բերվել նաև անօդաչու թռչող սարք: Կլիմայի փոփոխության ազդեցությունը նվազելու նպատակով թիրախային համայնքներում



Աջակցություն սելավատարի կառուցմանը, Լոռի, 2018

ընտանեկան պլանը (Անվտանգ ընտանիք) ձեռնարկ՝ 4000 օրինակով, տպագրվել և տրամադրվել է բնակչությանը:

Իրականացվել են համայնքային դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնք նախաձեռնվել են համայնքների կողմից՝ հաշվի առնելով կարողությունների և խոցելիությունների ուսումնասիրման արդյունքները: Կողես, Սարչապետ, Վահագնի, Դարպաս, Մարգահովիտ, Մեծ Պարնի, Օծուն, Կուրթան համայնքներում իրականացվել են սելավատարի կառուցման, խմելու ջրի ցանցի վերանորոգման, աղբահանության բարելավման, կոռոզացված հողերի վերականգնման, արտաքին լուսավորման արդիականացման աշխատանքներ:

Լոռու մարզային և Ստեփանավանի տարածքային գրասենյակներում տեղադրվել են արևային ֆոտովոլտային համակարգեր: Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի ճգնաժամային կառավարման կենտրոնի կարողությունների բարձրացման նպատակով ձեռք է բերվել արտակարգ իրավիճակների մոդելավորման

իրականացվել են դասընթացներ բնակչության համար՝ կլիմայի փոփոխության աղապտացման և գյուղատնտեսության համապատասխան զարգացման թեմաներով: Դասընթացները իրականացրել են Վանաձորի կլիմայի փոփոխության փորձագիտական խմբի մասնագետները:

2017թ. մարտին մեկնարկեց «Բարելավված արտակարգ իրավիճակներին նախապատրաստում և համակարգված արձագանքում Հարավային Կովկասում», որի նպատակն է հզորացնել Հայաստանի և Վրաստանի Արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում փոխգործակցությունը և կարողությունները՝ ԱԻ-ն արդյունավետ և համարժեք նախապատրաստվելու և արձագանքելու համար՝ երկրի սահմաններում և Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության գլխավոր վարչության կողմից:

2018թ. ընթացքում ՀՀ արտակարգ իրավիճակների

նախարարության և այլ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ հնարավոր եղավ գրանցել մի շարք ձեռք բերումներ, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի խորհրդատվական խումբի ստեղծումը, որին անդամակցում են Դանիական կարմիր խաչի, ԱԻՆ, ԱՌՆԱՊ հիմնադրամի, ՄԱԿ ՄԳՀԳ, ԿԻՄԿ համապատասխան ներկայացուցիչներ:

Իրականացվել է նաև շտաբային վարժանք ազգային գրասենյակի աշխատակիցների, ԿԻՄԿ, ԱՌՆԱՊ հիմնադրամի, ԱԻՆ ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Աղետների ռիսկի նվազեցման ճանապարհային քարտեզ համայնքի դիմակայունության համար»



Անդրսահմանային վարժանք ՀԿԻՆ և Վրացական Կարմիր խաչի Աղետներին արձագանքման թիմերի համար ուժեղ երկրաշարժի սցենարով, Ստեփանավան, Լոռի, 09.2018

ՀԿԻՆ աղետներին նախապատրաստման և արձագանքման կարողությունները ամրապնդելու նպատակով, ծրագրի թիրախ հանդիսացող Երևանի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի 5 մարզային մասնաճյուղերում հիմնվեցին 10-15 հոգուց բաղկացած մարզային արձագանքման թիմեր, որոնք անցել են համապատասխան դասընթացներ, թիմերի համար ձեռք է բերվել համապատասխան գույք՝ արձագանքման համար: Երևանում, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզային մասնաճյուղերում ստեղծվել են արձագանքման կենտրոններ:

Թիմերի կարողությունները գնահատելու նպատակով իրականացվել են վարժանքներ, որին բացի թիմերի անդամներից մասնակցել են տեղական փրկարար ծառայության, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները: Վարժանք է իրականացվել նաև Վրաստանի ԿԻ արձագանքման թիմի մասնակցությամբ, որի նպատակն է հստակեցնել միջսահմանային արձագանքման գործողությունները:

Ժրագիրը մեկնարկել է 2017թ. հուլիսին և ուղղված է նվազեցնելու Հայաստանի առավել աղետավտանգ գյուղական համայնքներում բնակվող մարդկանց խոցելիությունը և ամրապնդելու նրանց դիմակայունությունը: Այն ֆինանսավորվում է Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի կողմից:

2018թ.-ին գործողությունները հիմնականում ուղղված էին ծրագրի շահագրգիռ կողմերի և գործընկերների հետ կապերի ամրապնդմանը, համակարգման և համագործակցության մանրամասների քննարկմանը և հաստատմանը: Որպես թիրախ ընտրվել է Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքը: Ծրագրի շրջանակներում գնահատվել է թիրախային համայնքի ռիսկերը և դիմակայունության աստիճանը, որի համար հանդիպումներ են իրականացվել տեղական իշխանությունների և հիմնական ենթակառույցների պատասխանատուների հետ, ապահովվելու նրանց մասնակցությունը գնահատման գործընթացին: Գնահատման ամփոփումից հետո իրականացվել են փոքրածավալ

ծրագրեր, որոնք ուղղված են դիմակայունության բարձրացմանը: Մասնավորապես մաքրվել է համայնքի սելավատարը և տեղադրվել են աղբարկղներ աղբահանության խնդիրը լուծելու համար: Համայնքում բարելավվել է արտաքին լուսավորությունը:

Ծրագրի շրջանակներում կազմվել է համայնքի զարգացման ծրագիր, որը ընդգրկում է աղետների

մարզի գրեթե ամբողջ բերքը: Պաշտոնական տվյալներով խիստ տուժել են 11 համայնքների 2202 տնտեսություններ և ավելի քան 780 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր: Աղետի հասցրած ընդհանուր վնասը կազմել է 903.54 միլիոն ՀՀ դրամ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ որպես կառավարությանն աջակցող կազմակերպություն



Մարդասիրական օգնություն Շիրակի մարզի կարկտից տուժած համայնքներին, 2018

դիմակայունության բարձրացման բաղադրիչներ և գործողությունների պլան:

### **Մարդասիրական օգնություն Շիրակի մարզում կարկտահարությունից տուժածներին**

Շիրակի մարզի Առափի, Սառնաղբյուր և Նահապետավան համայնքների՝ 2018թ. օգոստոսի 17-ին և 18-ին տեղացած ուժեղ կարկուտի հետևանքով ամենաշատը տուժած 1097 ընտանիք՝ ընդհանուր առմամբ 5012 մարդ, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից ստացան մարդասիրական օգնություն՝ դրամական աջակցության տեսքով: «Հայբիզնեսբանկի» Գյումրու և Արթիկի մասնաճյուղերի միջոցով այդ ընտանիքների յուրաքանչյուր անդամ ստացան 22 440 ՀՀ դրամ (ընդհանուր առմամբ՝ 112 469 280 ՀՀ դրամ):

Օգոստոսին Շիրակի մարզում տեղացած աննախադեպ ուժեղ կարկուտը ոչնչացրել էր

մարդասիրական ոլորտում, տվյալ համայնքերին աջակցելու նպատակով, իրականացրել էր կարիքների գնահատում, որի արդյունքում ամենախոցելի էին համարվել Առափին, Սառնաղբյուրը և Նահապետավանը՝ որպես առավել տուժած համայնքներ (բերքի 80-100 տոկոսը կորցրած): Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ՝ ճշգրտվել և հստակեցվել են առավել տուժած ընտանիքների ցուցակները: Միջոցներ հայթայթելու նպատակով ՀԿԽԸ-ն համապատասխան ծրագրով դիմել էր Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետների արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդին և ստացել 257.134 շվեյցարական ֆրանկ (124 671 419 ՀՀ դրամ) տուժածներին մարդասիրական օգնություն տրամադրելու համար:



**Սահմանամերձ համայնքներում բնակչության, հատկապես երեխաների, անվտանգության բարելավում**

«Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում բնակչության, հատկապես երեխաների, անվտանգության բարելավում» ծրագիրը

Քաղաքիական պաշտպանության թիմերի 173 անդամների համար: Կազմակերպվել է «Առաջին օգնության հիմունքներ 5-օրյա դասընթաց սահմանամերձ Չորաթան գյուղի քաղաքապաշտպանության թիմի 10 անդամների համար: Դասընթացների ընթացքում մասնակիցները ստացել են ԱՕ ցուցաբերման



մեկնարկել է 2017թ.-ի հոկտեմբերից և նպատակ ունի ամրապնդելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջև միջազգային սահմանի երկայնքով տեղակայված գյուղերի համայնքների պատրաստվածությունը: Ծրագիրն ընդլայնելու է նաև ԿԻՄԿ և ՀԿԽԸ համագործակցությունը՝ երեխաների անվտանգության ամրապնդման գործում:

Տավուշի մարզում իրականացվել են հետևյալ փոքրամասշտաբ ծրագրերը. 1. Բերդավան համայնքի մանկապարտեզում վերանորոգվել է ապահով սենյակը, 2. Մովսես համայնքում կառուցվել է պաշտպանիչ պատ մանկապարտեզի շենքի խոցելիությունը նվազեցնելու նպատակով, 3. Պառավաքար համայնքի մանկապարտեզում կառուցվել է ապահով սենյակ և տեղադրվել խաղահրապարակ երեխաների համար: ԱԻՆ-ԿԻՄԿ-ՀԿԽԸ համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թարմացող դասընթացներ Տավուշի մարզի 10 սահմանամերձ /Ագտամուտ, Չինարի, Այգեպար, Մովսես, Պառավաքար, ՆերքինԿարմիրաղբյուր, Ոսկան, Բերդավան, Կոթի և Սարիգյուղ) գյուղերի

տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ: Բոլոր մասնակիցներին տրամադրվել է «Առաջին օգնության տարրեր» ուսումնական ձեռնարկը, իսկ յուրաքանչյուր թիմին՝ 2-ական ԱՕ արկղիկ և 1 ԱՕ պայուսակ: 11 համայնքների քաղաքիական պաշտպանության թիմերի անդամները վերապատրաստվել են և ստացել Աճյունների հետ վարվելակարգի գիտելիքներ:

Սահմանամերձ 11 համայնքների Քաղաքիական պաշտպանության թիմերի անդամները մասնակցել են Իջևանում կազմակերպված Առաջին օգնության մրցումներին և գործնականում ցուցադրել իրենց գիտելիքներն ու հմտությունները: Հաղթող է ճանաչվել Մովսես թիմը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրել են Պառավաքար և Չորաթան թիմերը: Տավուշի մարզի նույն համայնքների դպրոցներում անցկացվել է 3-ժամանոց 11 դասընթաց՝ Առաջին օգնություն և Անվտանգ վարքագիծ: Մասնակցել են 530 աշակերտ և 60 ուսուցիչ: Դասընթացներից հետո իրականացվել են ուսումնական վարժանքներ, որի ընթացքում երեխաները ցուցադրել են իրենց տեսական գիտելիքներն և գործնական հմտությունները:

## ՀԿԻԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղը՝ ճգնաժամային կառավարման կենտրոն

Ավստրիական Կարմիր խաչի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներն ծրագրի շրջանակներում ՀԿԻԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի տարածքում ստեղծվել է «Արտակարգ իրավիճակների արձագանքման և հունամիտար աշխատանքների համակարգման» կենտրոն, որը 2018 թվականին

օրինակ, անհրաժեշտության դեպքում միացնել կամ անջատել քաղաքի լուսավորությունը՝ ամբողջությամբ կամ մասնակի:

Հայկական Կարմիր խաչի Ստեփանավանի տարածքային մասնաճյուղն առավել կենտրոնացած է աղետների կառավարման ոլորտի զարգացման վրա: Որոնողափրկարարական, համայնքների դիմակայունության բարձրացման և ԱՌՆ իրագրելիության բարձրացման աշխատանքներ իրականացնում է 20 հոգուց բաղկացած կամավորական հատուկ



զինվել է նաև տեխնիկապես: Կենտրոնը եզակի է. համարվում է համայնքի աղետների կառավարման պահուստային կենտրոն:

Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվերով «Լոկատր» կազմակերպությունը (Ստեփանավանի օրինակով) ծրագիր է մշակել կենտրոնի համար, որը հնարավորություն է տալիս իրականացնել աղետների ռիսկերի ուսումնասիրություն, օրինակ՝ հաշվարկել սպառնացող վտանգի հնարավոր հետևանքները և այդ դեպքում անհրաժեշտ արձագանքը:

- Տեխնիկական հագեցումից հետո մեր արձագանքի մեր հնարավորություններն աճել են: Սա շատ մեծ քայլ է աղետների կառավարման համակարգում, -ասում է ՀԿԻԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի նախագահ Արմեն Առաքելյանը: - Անհրաժեշտ գործիքներ ունենք՝ լեռնափրկարարական, ծյան մեջ, բարձր լեռնային գոտիներում աշխատելու: Կա արհեստական պատ, որտեղ կամավորները անցկացնում են վարժանքներ: Հնարավորություն ունենք,

փրկարար ջոկատը, որի կազմում բացառապես մասնագիտական գիտելիքներով զինված և հատուկ վերապատրաստում անցած փրկարարներ են: Նրանց շարքերում են նաև որակավորված մասնագետներ՝ միջազգային կարգի, երկրորդ կարգի փրկարարներ, որոնք ներգրավված են եղել դեռևս 1988 թ. Սպիտակի երկրաշարժի փրկարարական և հետևանքների վերացման աշխատանքներում:

Նշված ծրագրի շրջանակներում կենտրոնը նաև դրոն է ձեռք բերել, որը նորություն է Հայաստանում:

- Դրոնի միջոցով ոչ միայն որոնում ենք իրականացնում, այլև բազմաթիվ այլ քայլեր, այն օրինակ՝ հնարավորություն է տալիս տուժածին 6-7 կգ ծանրոց հասցնել, որտեղ կարող են լինել առաջին օգնության պարագաններ, սնունդ, - շեշտում է Ա. Առաքելյանը:

Կամավորական հատուկ փրկարար ջոկատը պատրաստ է աղետների դեպքում արագ արձագանքման:



«Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում»  
(ԻՐԻՍ) ծրագրի մեկնարկը, 07.2018

**Տարբեր ձգնաժամային իրավիճակների հետևանքով առաջացած բնակչության հոսքերը և տեղաշարժը դառնում են մարդկանց իրավունքների ոչ լիարժեք կատարման, հատուկ կարիքներ ունեցող խմբերի խոցելիության աճի, սոցիալական և հոգեբանական ծանր իրավիճակների, բռնության և մարզինալացման պատճառ: ՀԿԽԸ-ն Բնակչության տեղաշարժի ուղղությամբ իրականացնում է ռեսուրսների հայթայթում և իրականացնում է ապաստան հայցողների, փախստականների, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված անձանց պաշտպանությանն ու ինտեգրմանն ուղղված ծրագրեր:**

2018թ., ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ, տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով, շարունակել ենք մեր

գործունեությունը ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավման, ընտանիքների ինքնաբավության և ինտեգրման ապահովման, սեռով և գենդերով պայմանավորված բռնության դեպքերի կանխարգելման և արձագանքման ուղղությամբ:

Դեռևս 2013 թվականից ՀՀ-ում ապաստանած փախստական ընտանիքների համար Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է տնտեսական ինտեգրմանն ուղղված բազմաբնույթ ծրագրեր, որոնցից էր եկամտաբեր գործունեության խթանումը՝ համապատասխան գործիքների, սարքավորումների կամ գյուղատնտեսական ապրանքների տրամադրման միջոցով: Եկամտաբեր գործունեությունը փախստականների շրջանում ամենաապահանջված աջակցության ձևը դարձավ: Խոհարարական, վարսահարդարման, մեքենայի վերանորոգման և մի շարք այլ ոլորտների աջակցությունը

հնարավորություն է տալիս փախստականներին ու տեղահանված անձանց սեփական փոքր բիզնեսը սկսել Հայաստանում: 2018 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 204 փախստական կամ փախստականի նման կարգավիճակ ունեցող ընտանիքներ, որոնք Հայաստան էին եկել Սիրիայից, Ադրբեջանից,

հանդիսացող անձանց մասնակցությամբ: Հանդիպումների նպատակն էր ստեղծել բազմամասնագիտական աշխատանքային խմբեր, բարձրացնել նրանց իրազեկվածությունը փախստականների պաշտպանության միջազգային և ազգային չափորոշիչների և ընթացիկ ծրագրերի վերաբերյալ, բարելավել համագործակցությունը



Ամառային դպրոց՝ Սիրիահայ և տեղացի երիտասարդների համար, Աղվերան, 2018

Եմենից, Նիգերից ու Լեռնային Ղարաբաղից, ստացան համապատասխան գործիքներ և բիզնես-խորհրդատվություն՝ սեփական ինքնաբավությունը ապահովելու և եկամուտ վաստակելու նպատակով:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի կողմից ֆինասավորվող «Փախստականների պաշտպանություն և տնտեսական ինտեգրում» ծրագրի շրջանակներում և ՏԿԶՆ միգրացիոն ծառայության հետ համագործակցությամբ, ՀՀ 10 մարզերում իրականացրել է համակարգող հանդիպումներ ինքնակառավարման մարմինների, ՄԱԿ ՓԳՀ և ՀԿԽԸ գործընկերների, ինչպես նաև ակտիվ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և մտահոգության առարկա

պետական և հասարակական կառույցների միջև, ինչպես նաև քննարկել տարածաշրջանում փախստականների հիմնախնդիրները (ղեպքերի քննարկում, արդի թեմաներ)՝ նրանց ներգրավումը և ինտեգրումը խթանելու նպատակով:

2016թ. կատարված օրենսդրական փոփոխություններից հետո, երբ օտարերկրյա քաղաքացիներին իրավունք չնորիվեց ապաստանի դիմել քրեակատարողական հիմնարկներում, այս հիմնարկների ղեկավարությունը դարձավ կարևոր դերակատար պոտենցիալ ապաստան հայցողներին բացահայտելու հարցում՝ ապահովելու նրանց հասանելիությունը ապաստանի ընթացակարգին: Այսպիսով, 2018թ. ՀԿԽԸ կազմակերպեց դասընթաց Արդարադատության նախարարության

քրեակատարողական հիմնարկների ղեկավարների, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական և իրավաբանական բաժինների աշխատակիցների համար՝ ներկայացնելու փախստականների պաշտպանության վերաբերյալ միջազգային և ազգային ստանդարտները: Այլ գործողություններին զուգահեռ, ՀՀ ԱԱԾ

իրականացրել նաև ՀՀ միգրացիոն ծառայության ապաստան հայցողների կացարանում, որտեղ անհատական խորհրդատվություններ ենք տրամադրել՝ իրավական, բժշկական, հոգեբանական, բնակության վայրի, աշխատանքի, սոցիալական կարիքների և այլ թեմաներով: Ընդհանուր առմամբ իրականացվել է 31 այց,



*«Ես կին եմ: Ես հավասար եմ: Ես աշխատում եմ:» խորագրով ցուցահանդես-վաճառք՝ Դավան Գարդեն Մոլում, 14.12.2018*

ու ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ սերտ համագործակցությամբ՝ սահմանակետերի, ինչպես նաև Զվարթնոց միջազգային և Գյումրու օդանավակայաններում պարբերաբար իրականացրել ենք սահմանի մոնիտորինգային 66 այցելություն: Սահմանակետերում աշխատող համապատասխան անձնակազմի՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ներկայացուցիչների և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների համար կազմակերպվել է 6 դասընթաց՝ փախստականների և ապաստան հայցողների իրավունքների, միջազգային և տեղական ընթացակարգերի, Եվրամիության լավագույն փորձի և այլ նմանատիպ թեմաների վերաբերյալ: Ամեն շաբաթ մոնիտորինգային այցեր ենք

որոնք օգնել են ապահովել ժամանակին և ստույգ բացահայտելու որոշակի ընդհանուր/անհատական պաշտպանության ռիսկերը՝ հետագայում լուծում տալով կացարանում և բնակիչների կյանքում ծագած մի շարք խնդիրների: Բացահայտված խնդիրները մանրակրկիտ վերլուծվել են ՀԿԽԸ թիմի կողմից, ուղղորդումներ են արվել համապատասխան պետական և հասարակական կազմակերպություններին, կացարանի ղեկավարությանը և այլն:

Խորհրդատվությունների ընթացքում ապահովվել է 807 ժամ բանավոր և 2270 էջ գրավոր թարգմանություն՝ պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, պուշտու, եզդիերեն, քրդերեն, բենգալերեն, թաիլանդերեն և այլ լեզուներով:

Սեռով ու գենդերով պայմանավորված բռնությունների (ՍԳՊԲ) կանխարգելման նպատակով 3 դասընթաց ենք անցկացրել մտահոգության առարկա հանդիսացող 75 անձանց համար:

Ստեղծել ենք նաև Կանանց փոխաջակցման խումբ, որի շրջանակներում կայացող ամենամսյա հանդիպումները օգնել են նվազեցնել կանանց մոտ տեղահանման հետևանքով առաջացած տրավմաների ազդեցությունը, կանխարգելել հոգեբանական բազմաթիվ խնդիրներ և ընտանեկան կոնֆլիկտներ, կանանց հզորացման միջոցով, գիտելիք և տեղեկատվություն փոխանցելու միջոցով՝ նվազեցնել գենդերով պայմանավորված բռնությունը:

2018թ. հուլիսին մեկնարկեց Եվրամիության «ՄԱԴԱԴ» ֆոնդի կողմից ֆինանսավորվող «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագիրը, որի հիմնական նպատակն է բարելավելու սիրիահայերի և տեղացիների սոցիալ-տնտեսական դիմակայունությունը և հզորացնելու Հայաստանում տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները: Ծրագրի բաղադրիչներից մեկը սիրիահայերի բնակարանային վարձերի մասնակի փոխհատուցումն է: Քանի որ բնակավարձերը բավականին բարձր են, իսկ առևտրային բանկերի ծառայությունները հասանելի չեն սիրիահայերի համար, այս խնդիրն ամենամեծ մարտահրավերներից է, որին պետք է ցուցաբերել բազմամակարդակ մոտեցում: Ծրագրի շրջանակներում 100 ամենախողելի սիրիահայ

ընտանիքների տրամադրվել է բնակարանային վարձերի փոխհատուցում հոկտեմբերից:

ԻՐԻՍ ծրագրի մյուս բաղադրիչը տնտեսական ինտեգրումն է, որի շրջանակներում, մասնավորապես, աջակցություն է տրամադրվում զբաղվածության ապահովման հարցում: Հայաստանում զբաղվածությունը կարևոր մարտահրավեր է ոչ միայն սիրիահայերի, այլ նաև տեղացիների համար: Ուստի, այս բաղադրիչի շրջանակներում ինքնակենսագրություններ կարող են ներկայացնել ոչ միայն աշխատանք փնտրող սիրիահայերը, այլ նաև 18 տարին լրացած տեղացիները: Հարցազրույց անցած և հաստատված հայտատուները կանցնեն եռամսյա վերապատրաստման պրակտիկա գործատուների մոտ: Պրակտիկայի համար կվճարի Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ յուրաքանչյուր վերապատրաստվողի համար ամսական 125 եվրոյին համարժեք դրամ: Բաղադրիչի շրջանակներում 2018-2021 թթ. 100 մարդ գործնական վերապատրաստման ընթացքում ձեռք կբերի հմտություններ և ավելի մրցունակ կդառնա հայաստանյան սահմանափակ աշխատաշուկայում: Նախատեսվում է, որ արդյունքում, 60 մարդ կունենա կայուն և տևական զբաղվածություն:

2018թ. ընդհանուր առմամբ մտահոգության առարկա հանդիսացող (ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ստացած, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված) 1976 անձ դիմել է ՀԿԽԸ՝ տարբեր կարիքներով: 1976 անձի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:



Իրազեկում ՉԿԽԸ Որոնում ծառայության վերաբերյալ, Կոտայքի մարզ, 2018

**Հայկական Կարմիր Խաչի ընկերության (ՉԿԽԸ) «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է արձագանքելու մարդկանց, ում հարազատներն անհայտ կորած են, կամ որոնք տարանջատված են հարազատներից այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են. հակամարտությունները, աղետները, բնակչության տեղաշարժը, միջազգային միգրացիան և մարդասիրական արձագանք պահանջող այլ իրավիճակները:**

Ընտանեկան կապերի վերականգնում 2018 թ. ընթացքում Հայկական Կարմիր Խաչի ընկերության «Որոնում» ծառայությունը ստացել է ավելի քան 37 հայտ հետևյալ ուղղություններով. անհատների որոնում, ընտանիքի մասին տեղեկությունների փոխանակման կազմակերպում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, գոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում

և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, զերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում:

### Կամավորների վերապատրաստում

ՀԿԽԸ բոլոր 10 մարզային մասնաճյուղերից 30 կամավորներ վերապատրաստվել են՝ ՀՀ մարզերում Որոնում ծառայության մասին իրազեկման տարածման համար, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, մարզային բնակիչներից որոնման հայտերի ընդունման համար:

ԿԽՄԿ-ի տվյալներով՝ ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած են համարվում շուրջ 4500 մարդիկ, որոնցից մոտ 400-ի մասին որոնման հայտեր բացվել

են Հայաստանում: ԿԽՄԿ-ն աշխատում է նաև անհայտ կորածների ընտանիքների հետ (ԱԿԸ)՝ ուշադրության կենտրոնում պահելով նրանց տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքները:

### **ՀԿԽԸ Որոնում ծառայության գործունեությանը նվիրված Կլոր սեղան - հանդիպում**

Դեկտեմբերին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպվեց ամենամյա կլոր-սեղան հանդիպումը՝ նվիրված ընկերության Որոնում ծառայության կողմից իրականացվող Որոնման ու Ընտանեկան կապերի վերականգնման (ԸԿՎ) ուղղված գործունեությանը:

Հանդիպմանը ներկա էին ուղորտում գործող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեից, ՀՀ Ազգային արխիվից, ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունից, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայությունից, Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից և Հայկական Կարմիր խաչի ընկերությունից:

Կլոր սեղանը նպատակ ուներ լրացնել համագործակցող և շահագրգիռ կողմերի միջև գոյություն ունեցող տեղեկատվական բացը, պարզաբանել որոնման և ընտանեկան կապերի վերականգնման աշխատանքները կազմակերպելու ընթացքում ծագող իրավական բնույթի հարցեր և իրավիրել համագործակցող և շահագրգիռ կողմերի ուշադրությունը դեպի ընտանեկան կապերի վերականգնման ուղղված գործունեության կարևորությունը՝ հիմք ընդունելով հարազատների՝ միմյանց հետ հաղորդակցվելու և միմյանց գտնվելու վայրի ու ճակատագրի վերաբերյալ տեղեկացված լինելու իրավունքը: Հանդիպման արդյունքում ձևավորված համագործակցության դաշտն ու հասցեագրված խնդրո առարկա հարցերն իրենց դրական

ներգործությունը կունենան ՀԿԽԸ Որոնում ծառայության ԸԿՎ արդյունավետ գործունեության բնագավառում:

### **Սատարում անհայտ կորածների ընտանիքներին**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ԿԽՄԿ հայաստանյան պատվիրակության ֆինանսավորմամբ, իրականացնում է «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է սատարել անհայտ կորածների ընտանիքներին՝ հարազատի անհետացման արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները հաղթահարելու գործում:

2018թ.-ին ծրագրում ներգրավված են եղել Տավուշի՝ 11, Շիրակի՝ 11, Լոռու՝ 19, Արարատի՝ 34, Արմավիրի՝ 40, Վայոց Ձորի՝ 5, Սյունիքի՝ 47 և Սևանի՝ 15 անհայտ կորած անձանց ընտանիքներ: Այս մարզերում բնակվող անհայտ կորած ընտանիքներին մեծ մասը կանոնավոր կապ է պահպանում ՀԿԽԸ-ի հետ: Ըստ անհրաժեշտության՝ շահառու ընտանիքների համար անց են կացվել հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ուղորտների մասնագետների հետ:

### **Կենսաբանական նմուշների հավաքագրում**

Անհայտ կորած անձանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ձեռք բերելու նպատակով ԿԽՄԿ-ն ձեռնարկեց «Կենսաբանական նմուշների հավաքագրում» (ԿՆՀ) պիլոտային ծրագիրը, որը Հայաստանի իշխանությունների անունից և ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ մեկնարկեց 2014թ.-ին: 2018թ.-ին ծրագիրը լիընթաց կերպով անցկացվեց Երևանում և մարզերում: Արդյունքում մոտ 82 անհայտ կորած անձանց հարազատներից հավաքագրվեցին կենսաբանական նմուշներ և վերաբերելի տվյալներ: Ծրագրի ավարտին մոտ 400 ընտանիքներից նմուշ են տրամադրել 344-ը: 2014-2018 թթ. ընթացքում հավաքվել է 1120 կենսաբանական նմուշ:





*Առաջին օգնության տարածաշրջանային մրցումներ՝ Տավուշի սահմանամերձ 10 համայնքների կամավորական թիմերի միջև, հուլիս, 2018*

**ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը ուղղված գործունեություն ծավալում:**  
**Կենտրոնն իրականացնում է Առաջին օգնության Եվրոպական խորհրդատվական կենտրոնի չափանիշներին համապատասխանող առաջին օգնության (ԱՕ) և անվտանգ վարքագծի դաստիարակման (ԱՎԴ) դասընթացներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:**

### ԱՕ դասընթացներ

2018թ.–ին դասընթացներ են իրականացվել ՀԿԽԸ կամավորների, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների, Տավուշի սահմանամերձ գյուղերի քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների, սահմանամերձ և հեռավոր համայնքների բնակիչների համար: Ընդհանուր առմամբ, 2018 թվականի ընթացքում կենտրոնն իրականացրել է 80 դասընթաց և 20 սեմինար, որոնց մասնակցել է 1600 մարդ:

Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել «Լիդիան Արմենիա», «Դաբլ Թրի Բայ Հիլթոն Երևան», «Ջեյ Այ Թի », «Նյուտոնիկ կրթահամալիր», «ՆՈՒԵՎԱ ՎԻՍՏԱ» ՍՊԸ, « Կոկա Կոլա Հեյլենիկ», Սոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների և մի շարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացներ ՀՀ Տավուշի մարզի 10 սահմանամերձ / Բարեկամավան, Դովեղ, Բաղանիս, Ոսկեպար, Սևքար, Կիրանց, Ներքին Ծաղկավան, Բերքաբեր, Վազաշեն, Այգեհովիտ/ համայնքներում: Դասընթացներին մասնակցել է 98 հոգի: 10 սահմանամերձ համայնքների վերապատրաստված բնակիչների մասնակցել են Առաջին օգնության միջհամայնքային մրցումներին և գործնականում ցուցադրել են իրենց գիտելիքներն ու հմտությունները: Հաղթող է ճանաչվել Ոսկեպար թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրեցրել են Վազաշենի և Այգեհովիտի թիմերը:

**Առաջին օգնության դասընթացներ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կամավորների համար**

տարրեր» գիրքը, ինչպես նաև յուրաքանչյուր թիմին նվիրաբերվել է 2-ական առաջին օգնության արկղիկ:



Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներին դասընթաց Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի 75 կամավորների համար:

**ԱՕ հրահանգիչների նախապատրաստում**

2018թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է ԱՕ հրահանգիչների վերապատրաստման 2 դասընթաց, որին մասնակցել է ՀԿԽԸ 15 ԱՕ հրահանգիչ:

Առաջին օգնություն՝ հրշեջ-փրկարարների համար Իտալական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ ՀՀ 10 մարզերի՝ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Սյունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու 130 հրշեջ - փրկարարների համար կազմակերպվել և անցկացվել է «Առաջին օգնության հիմունքներ» 10 դասընթաց: Յուրաքանչյուր դասընթացից հետո մասնակիցներին տրամադրվել է «ԱՕ

**Հանրային միջոցառումների սպասարկում**

Սեպտեմբերի 21-ին Հանրապետության հրապարակում տեղադրվել են Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության տաղավարները և առաջին օգնություն է ցուցաբերվել 300-ից ավել քաղաքացու: Հոկտեմբերի 7-ից 12-ը Հայաստանում անցկացվող Ֆրանկոֆոնիայի միջոցառումների ամբողջ ընթացքում Ազատության հրապարակում Ֆրանկոֆոնիայի ավանում, տեղադրվել են Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության տաղավարները և հատուկ պատրաստվածություն անցած թիմն ու կամավորները առաջին օգնություն են ցուցաբերել հարյուրավոր քաղաքացիների: ՀԿԽԸ ԱՕ բաժինը մասնակցել է ՀՀ ԱԻՆ կողմից դպրոցներում, ուսումնական հաստատություններում իրականացվող վարժանքներին: 2018թ. ՖԻՖԱ-ի և ՈԻՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ՀԿԽԸ ԱՕ խմբերն իրանացրել են ԱՕ ծառայություն:



Այցելություն հանրակացարանարևակ միայնակ փախստական ծերերին, 02.2018

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում ՀԿԽԸ-ն շարունակում է իրականացնել «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագիրը:

Ծրագրի՝ Ինտեգրացված տնային խնամքի բաղադրիչի շահառուները տարեց, քրոնիկական հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվում են սոցիալական ծառայությունների, ինչպես նաև առողջապահական համակարգի ներկայացրած ցուցակներից՝ ծրագրի աշխատակիցների կողմից մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

Ծրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

- 1) խնամքի բուժքույրերը՝ յուրաքանչյուր մարզում 3 բուժքույր,
- 2) տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 6 տնային խնամող,

3) կամավորները՝ Լոռու մարզում՝ 14, Շիրակի մարզում՝ 11, որոնք անցել են համապատասխան դասընթացներ: 2019թ. նրանց թիվը համալրվելու է մինչև 60 (երկու մարզերում):

Ծառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող այս երեք խմբերի համար: Մասնավորապես, բուժքույրերի կողմից իրականացվում են ներարկումներ՝ ըստ տեղամասի բժիշկի նշանակման, մաշկի, լորձաթաղանթների խնամք, ատամների, բերանի խոռոչի խնամք, պառկելախոցերի կանխարգելում ու մշակում, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսումների իրականացում և այլն: Տնային խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս: Կամավորների կողմից մատուցվող ծառայությունները հիմնականում ներառում են այցելություններ շահառուներին, զրույցներ նրանց հետ, ընթերցանություն, ուղեկցում խանութ,



Տնային խնամք՝ անկողնային միայնակ տարեցների համար, Վանաձոր, Լոռի, 2018

դեղատուն, աջակցություն կոմունալ վճարումների կատարման, փաստաթղթերի լրացման ընթացքում և այլն:

Անհատական կարիքից ելնելով շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապարկելախոցային բարձեր և ներքնակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր երեք խնամք իրականացնողները, ծառայության մատուցմանը զուգահեռ, տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Խնամքն իրականացվում է տեղամասային պոլիկլինիկաների հետ սերտ համագործակցությամբ, տեղամասային բժշկի անմիջական հսկողությամբ, անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետների ներգրավմամբ: 2018 թվականի ավարտին ծրագրում ներառվել է 120 շահառու՝ յուրաքանչյուր մարզում 60 անձ:

Հիմք ընդունելով տնային խնամքի նպատակը՝ շահառուների կյանքի որակի բարելավումը, ծրագրի շահառուների թվում ընդգրկված են անձինք, ովքեր գտնվում են սահմանային վիճակներում: Նման հիվանդներին (անձանց) ծառայությունը մատուցվում է ցմահ՝ կյանքի վերջին ժամանակահատվածն արժանապատիվ ապրելու համար:

Ծրագրի երկրորդ բաղադրիչը Ակտիվ երկարակեցությունն է, որի նպատակն է ծերացմանը զուգընթաց երկարացնել առողջ և որակյալ կյանքի տևողությունը:

ՀՀ Շիրակի և Լոռու մարզպետարանների հետ համագործակցությամբ 2017 թ.-ին ընտրվել են 5-ական համայնք՝ յուրաքանչյուր մարզում: Դրանք են. Վանաձոր, Սպիտակ, Սարգսհովիտ, Օձուն և Մեծ Պարնի՝ Լոռու մարզում, և Ամասիա, Փանիկ, Նոր կյանք, Սպանդարյան և Հռոռո՝ Շիրակի մարզում:

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակեցությունը հնարավորություն է տալիս մարդկանց ակտիվ դեր ունենալ իրենց սեփական և համայնքային կյանքի բարելավման գործընթացում: Մարդիկ ձևավորում են խմբեր, բացահայտում և վերլուծում են իրենց և համայնքի խնդիրները, որոշումներ կայացնում և հանդես գալիս որպես հիմնական դերակատար վերը նշված գործընթացներում: Ծրագրի նպատակն է ավելացնել համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց և նրանց շփումները, այսինքն, խթանել տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: Այդ նպատակով նշված 10 համայնքներում ստեղծվել են Նախաձեռնող խմբեր: Դրանք կազմվել են հիմնականում համայնքի տարեցներից, սակայն ընդգրկվելու հնարավորություն է ընձեռնվել յուրաքանչյուր ցանկացողի համար՝ անկախ տարիքից: ՀԿԽԸ ապահովել է Նախաձեռնող խմբերի ուսուցանումը, կարողությունների զարգացումը: Համայնքապետարանները նախաձեռնող խմբի անդամներին հավաքատեղի են հատկացրել՝ նրանց պարբերական հանդիպումների, աշխատանքի



Երևան քվեսթ «ժպիտների ակումբի» երեխաների համար, 2018

և գործողությունների պլանավորման համար: Որպես առաջին նախաձեռնություն՝ Նախաձեռնող խմբերը սեփական ուժերով և կարողություններով վերանորոգել են իրենց հատկացված տարածքները՝ ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ կողմից տրամադրված շինարարական նյութերով, ինչպես նաև համայնքների աջակցությամբ: Այս բաղադրիչի շրջանակներում 2019 թ. առաջին եռամսյակում ընտրվելու են ևս 5-ական համայնքներ երկու մարզերում: Ծրագրի ավարտին գործելու է առնվազն 20 համայնքային նախաձեռնող խումբ: Նախաձեռնող խմբերին հնարավորություն է տրվելու ծրագրային առաջարկով դիմել փոքր դրամաշնորհներ ստանալու՝ իրենց հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

2018թ 1-ին եռամսյակի ընթացքում Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ իրականացվել է «Սոցիալ-հոգեբանական աջակցություն միայնակ փախստական ծերերին և երեխաներին» ծրագրերը՝ Երևան, Աբովյան և Հրազդան քաղաքներում գտնվող հանրակացարաններում բնակվող շուրջ 120 միայնակ փախստականների և 200 երեխաների համար: Ծրագրի շրջանակներում ավելի քան 30 երիտասարդ կամավորներ սոցիալ-հոգեբանական ծառայություններ են

մատուցել միայնակ փախստական ծերերին. իրականացրել են շաբաթական այցելություններ, ամիսը մեկ անգամ տրամադրել սնունդ և երեք ամիսը մեկ անգամ՝ հիգիենիկ պարագաներ, օգնել մանր կենցաղային գործերում՝ այդ թվում նաև որոշ հարնակացարաններում մատուցվել է նաև լվացքի և արդուկի ծառայություն: Տարվա ընթացքում կամավորները, շահառուների սոցիալականացմանը և հանգստի կազմակերպմանը նպաստելու համար, իրականացրել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ, ինչպես օրինակ այցելություններ թատրոններ, համերգներ, քաղաքից դուրս գտնվող տեսարժան վայրեր: 2018թ, 2-րդ եռամսյակից սկսած Իտալական ԿԽ աջակցությամբ ծրագիրը շարունակվել է:

Հանրակացարաններում բնակվող երեխաների հետ աշխատանքը նպատակ ունի նպաստելու երեխաների կրթական և ինքնագարգացման գործընթացներին՝ բազմակողմանի կրթական, մշակութային և ինտեգրման միջոցառումների միջոցով: Հանրակացարաններում հատուկ կառավորված սեմյակներում ծրագրի կամավորները ամենօրյա պարապմունքներ են անցկացրել երեխաների համար. իրականացրել են դասապատրաստում և զանազան



Երեխաների կայուն զարգացում, Բերդ, Տավուշ, 2018

խմբակների վարում (մաթեմատիկայի, օտար լեզուների, աշխարհագրության և այլն): Սօցիալական և աշակերտության աջակցությամբ իրականացվել են նաև համակարգչային դասընթացներ: Պարապմունքներից զատ ամեն օր կամավորները կազմակերպել են սպորտային և ժամանացային միջոցառումներ, իսկ ամեն ամիս երեխաները մասնակցել են մշակութային միջոցառման՝ այց թատրոն, թանգարան և տեսարժան վայրեր: Երեխաների համար կամավորները կազմակերպել են մի շարք տոնակատարություններ՝ ս. Ջատկի, Ամանորի, Հունիսի 1-ի և այլն: Իսկ ամռանը երեխաների համար կազմակերպվել է հանգստի և վերականգնողական ճամբար: 2018թ. Չրդ եռամսյակից սկսած ծրագիրը շարունակվել է Արմանդ Արտոն Գրուպ Կանադական ընկերության աջակցության շնորհիվ:

2018թ. հուլիսին մեկնարկեց «Սիրիահայերի դիմակայունության բարձրացում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում հնարավոր է եղել շարունակել սոցիալ-հոգեբանական աջակցությունը 200 միայնակ փախստական հանրակացարանաբնակ և սիրիահայ տարեցներին՝ Երևան, Աբովյան և Հրազդան քաղաքներում: Շաբաթական այցելություններ են կազմակերպվել կամավորների կողմից, եռամսյակը մեկ անգամ տրամադրվել են

սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ: Պարբերաբար կազմակերպվել են սոցիալական և մշակութային միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում նաև հիմնվել է Սիրիահայերի աջակցման Սոցիալ-հոգեբանական կենտրոն, որի նպատակն է աջակցել սիրիահայերի ինտեգրմանը՝ հոգեբանական խորհրդատվության և սոցիալականացման միջոցառումների կազմակերպման միջոցով: Ծրագրի կրթական բաղադրիչով Երևանի 5 դպրոցներում կազմակերպվել են «Երեխաների կայուն զարգացման» դասընթաց՝ 20 պարապմունքներով: Ծրագիրն իրականացվել է վերապատրաստված 15 կամավորների օգնությամբ՝ մոտ 70 երեխաների համար:

2018թ. ապրիլին մեկնարկեց «ԵՄ հանուն երիտասարդության. Աշխատունակության խթանում» ծրագիրը՝ ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից և իրականացվում Դանիական ԿԻՄ հետ համագործակցությամբ: Ծրագրի շրջանակներում Իջևան, Դիլիջան, Սևան և Գավառ քաղաքներում հիմնվել են երիտասարդական ակումբներ, որոնք նպատակ ունեն կրթել երիտասարդներին, զարգացնել նրանց կարողությունները՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար: Իրականացվել են

81 տարեկան Գրիշա Իսրայելյանը ապրում է Արարատ մարզի Մասիս քաղաքի փոքրիկ տնակներից (դոմիկ) մեկում: Ամբողջ կյանքը զբաղվել է շինարարությամբ: հպարտությամբ նշում է, որ Աբովյան քաղաքի շատ շինությունների կառուցման աշխատանքներում իր ներդրումն է ունեցել: Ունի չորս զավակ՝ երեքը Ռուսաստանում են, մեկը՝ ֆրանսիայում, բայց այսօր ապրում է իրենցից հեռու՝ միայնակ: Գրիշա պապիկը երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ օրերին շաբաթը երեք անգամ, զալիս է Մասիս քաղաքում գտնվող բարեգործական ճաշարան ստանալու իր բաժին սնունդը:

Արարատ մարզի Մասիս քաղաքում գործող Հայկական Կարմիր խաչի բարեգործական ճաշարանը մոտ 80 միայնակ անապահով տարեցների տրամադրում է բարձր կալորիականությամբ սնունդ: Ծրագիրը գործում է Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ: -Ես Կարմիր խաչից շատ գոհ եմ: Մարդիկ տանջվում են, չարչարվում են, երկիր են կառուցում, բարի գործեր են անում, ծերանում են, ու լինում են դեպքեր, որ մնում են մենակ, բայց Կարմիր խաչը տեր է կանգնում: Աստված իրենց հետ, թող նման մարդիկ հաջողություն շատ ունենան: Ծերության հասակում մարդուն օգուտ են տալիս, տիրություն են անում, հոգ տանում դրանով երջանկացնում ծերերին, - ասում է նա: Գոհունակությամբ հայտնում է, որ այստեղ բոլորը շատ ուշադիր են, հոգատար, ճաշն էլ միշտ համեղ է:



Երիտասարդների կարիքների գնահատում և աշխատաշուկայի ուսումնասիրություն, ինչի արդյունքները հիմք են ծառայելու եռամյա ծրագրի միջոցառումները համապատասխան ուղղություններում իրականացնելու համար: Երիտասարդական ակումբների ստեղծման գործում տեխնիկական աջակցություն է տրամադրվել բոլոր 4 քաղաքների ՏԻՄ - երի կողմից, ինչն էլ հիմք է դրել երկարաժամկետ և արդյունավետ համագործակցությանը ՏԻՄ-երի հետ: Ծրագիրը տարածաշրջանային է՝ ներառելով նաև Բելառուսական և Վրացական Կարմիր խաչի Ազգային ընկերություններին:

2018թ. մարտ ամսին 2 տարի ժամկետով մեկնարկեց «Կրթական աջակցություն Հայաստանի անտեսված և անապահով պատանիներին և աղջիկներին» ծրագիրը՝ Գերմանական ԿԻՄ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային մասնաճյուղի ֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվել է 48 պատանիների համար՝ Արմավիրում և Իջևանում: Ծրագրի շրջանակներում երիտասարդները մասնակցել են մասնագիտական դասընթացների՝ վարսավիություն, կարուծն, ավտոմեխանիկա և այլն: Դասընթացներից զատ երիտասարդների համար կազմակերպվել են ինտեգրման և ընդհանուր զարգացվածությունը խթանող հանդիպումներ՝ ԳԿԻՄ կողմից շահառու

պատանիներին եռամսյակը մեկ անգամ տրվել են նաև սննդի փաթեթներ:

### Բարեգործական ճաշարան՝ Մասիսում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, 2017թ. հուլիսից բարեգործական ճաշարան գործարկեց Արարատի մարզի Մասիս քաղաքում: Այս նախաձեռնության շնորհիվ 85 տարեցներ ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԻԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն իրականացվել է սերտորեն համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես՝ մարզպետարանի և քաղաքապետարանի սոցիալական հարցերի բաժինների հետ: Հայկական Կարմիր խաչի ընկերության նախաձեռնությանը միացել են և իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման մարմիններն ու մասնավոր սեկտորը՝ Մասիս քաղաքապետարանն աջակցել է տարածքի վերանորոգմանը, որն անվարձահատույց տրամադրվել էր մասնավոր անձի կողմից, «Ապարան» ջրի գործարանի



«ԵՄ հանուն երիտասարդության. Աշխատունակության խթանում» ծրագրի» մեկնարկը, 07.2018

կողմից տրամադրվում է խմելու ջուր, «Վեգա» ընկերության կողմից՝ կենցաղային տեխնիկա:

### Մարդասիրական օգնություն՝ սիրիահայ խոցելի ընտանիքներից

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ ՀՀ և ՌԴ Արտակարգ իրավիճակների նախարարությունների աջակցությամբ և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետ համագործակցությամբ, մեկանգամյա մարդասիրական օգնություն տրամադրեց Հայաստանի Հանրապետությունում բնակվող 1200 սիրիահայ խոցելի ընտանիքների, սննդի փաթեթների տեսքով (ծեթ, բրինձ, հնդկաձավար, խտացրած կաթ): Օգնությունը տրամադրվել է ՀԿԽԸ կամավորների միջոցով:

### Գթություն

ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղը՝ «Դանդի փրեշուս մեթալս Կապան» ընկերության աջակցությամբ իրականացնում է «Գթություն» ծրագիրը, որի շրջանակներում 200 միայնակ տարեց տարին մեկ ստանում են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ և դեղահաբեր: Անկողնային միայնակ տարեցները ծանրոցները ստանում են տարին երկու անգամ, իսկ կամավորները նրանց բոլորի կողքին են լինում ամբողջ տարին՝ նշելով Ամանորը, Ջատիկը և ծննդյան օրերը:

### Հայաստանի մարզերում սննդի աջակցության ծրագրեր

280 խոցելի տարեցներ Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում ստանում են սննդի աջակցություն կամավորների այցերի և Արարատ մարզի Մասիս քաղաքում բարեգործական խոհանոցի միջոցով: ՀԿԽԸ չորս մասնաճյուղերը սննդի աջակցության տրամադրման կարողություններ և փորձ են ձեռք բերում, ինչպես նաև տեղական շահագրգիռ կողմերի հետ լավ հաղորդակցվելու և տեղական ռեսուրսներ մոբիլիզացնելու, կամավորներին ավելի լավ կառավարելու հնտություններ: Այս ծրագրի իրականացման համար մասնաճյուղերը ընտրվել են մրցակցային սկզբունքով՝ որոշակի չափանիշների հիման վրա, ինչպիսիք են՝ առաջարկվող գործունեության համապատասխանությունը կարիքին, ծրագրային առաջարկի որակը, մասնաճյուղի և տեղական շահագրգիռ կողմերի ներդրումը, բյուջեի արդյունավետությունը և այլն: Ծրագրի բյուջեի մոտ 20% -ը տրամադրում են տեղական շահագրգիռ կողմերը: Ծրագիրը շարունակվելու է մինչև 2019թ. Հոկտեմբեր:

### Կամավորական նախաձեռնություններ

Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի կամավորները պարբերաբար անց են կացրել





Սննդի աջակցության ծրագիր, Արագածոտն, 2018

արտադպրոցական դասընթացներ և ամառային ճամբար՝ 24 սոցիալապես անապահով խոցելի երեխաների համար:  
Վարդենիսի համայնքային մասնաճյուղը, «Աստղավարդ» ՀԿ հետ համագործակցելով, կազմակերպեց կարի դասեր՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի համար:  
Տավուշի կամավորները կազմակերպեցին ամառային ճամբար անապահով ընտանիքների երեխաների համար:

Դիլիջանի ՍՄԿ միջազգային դպրոցի ՀԿԽԸ կամավորները իրականացրել են մի շարք կամավորական միջոցառումներ, որոնց շրջանակներում հաշմանդամություն ունեցող երեխաները հնարավորություն են ունեցել շփվելու ընտանի կենդանիների հետ, խոցելի ընտանիքները և միայնակ տարեցները ստացել են կամավորների կողմից հավաքած վառելափայ, միայնակ տարեցները ստացել են սնունդ և դեղորայք՝ բարեգործական համերգից ստացված հասույթի շնորհիվ:

